

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 հունվարի 2019թ.
ք.Երևան

N 2-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշմամբ հաստատված «Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգի» 5-րդ կետով սահմանված կարգով,

2) 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Իմ քայլը դաշինք՝ 15-ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 4-ական

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն՝ 3-ական

ա. 2019 թվականի փետրվարի 17-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում

խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Վարդաշեն	11/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Հայկական	15/1	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Հովտամեջ	15/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Նալբանդյան	16/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նալբանդյան	16/2	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Նոր Արմավիր	16/3	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Զրաշեն	16/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Օհանավան	17/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Տեղեր	18/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Քաղսի	26/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Հառիձ	33/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ծաղկավան (Իջեվան)	37/1	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Ակնաղբյուր	38/1	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Գետահովիտ	38/2	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/3	ԲՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/4	ԻՄ ՔԱՅԼԸ	ԲՀԿ
Իջեվան	38/5	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ
Իջեվան	38/6	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/7	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/8	ԼՀԿ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/9	ԻՄ ՔԱՅԼԸ	ԻՄ ՔԱՅԼԸ
Իջեվան	38/10	ԻՄ ՔԱՅԼԸ	ԼՀԿ

2. Սույն որոշման 1-ին կետի 2-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2019 թվականի հունվարի 18-ից մինչև հունվարի 23-ը՝ մինչև ժամը 18.00-ն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան